կին Դատաւորի, որպէս ասացին Հայք, բերցեն աստ պայ-նոսիկ, զի ընթերցեալ մուծցի յարձանագրութիւնն ։

Մատուցին Հայք զհրամանագիրն Փոխարքային, գրեալ 'ի ١٥ Շապան ամսոյ ١٢٥٣, և զՀէօճճէթն տուեալ երկուց ազգաց 'ի ժամանակս Նուրի Էֆէնտեայ, հիմնեալ 'ի վերայ հրովարտակի բաժանորդութեան ։ Միւֆթի Էֆէնտին ասէ՝ 'ի բաժանորդութեան Հէօճճէթին Նուրի Էֆէնտեայ չիք ինչ պայման թուոյ և քանակութեան պատկերաց և կանթեղաց երկուց կողմանց, թէպէտ Բեթղեհէմի և Աստուածածնի բաժանորդութիւնն մի միայն լոկ բառէ բաղկացեալ է, այլ Հայք ասացին թէ բաժանորդութիւնն Բեթղեհէմի նման է բաժանորդութեան Ս. Աստուածածնի, և պահանջեն զի եղիցի եկեղեցին Բեթղեհէմի, որպէս լեալ է Աստուածած-նին ։ Եւ ո՞րպէս լեալ իցէ բաժանորդութիւնն Աստուածած-նի 'ի ٢٨ թուականէ մինչեւ ٥٢ թուականն, յաւելեալ իցէ անդ իր ինչ, թէ ըստ Բեթղեհէմի միակերպ ընթացեալ են, հարկ է բացատրել ։

Փոխանորդն Հայոց ասէ, 'ի նախընթաց ժամանակս չէ լեալ անդ նոր ինչ յերկուց կողմանց, որ ինչ էր 'ի ժամա-նակս Նուրի Էֆէնտեայ, նոյն է և այժմ, և եթէ լեալ է, և այն առանց խռովութեան և հաճութեամբ երկուց կող-մանց ։

Փոխանորդն Յունաց, այնպէս է որպէս ասացին Հայք, եթէ լինէր նոր ինչ 'ի միոյ կողմանէ, 'ի հարկէ չլռեալ միւսոյ կողման, բողոքէր և դատ հասանէր 'ի դատարան. Նայեցարուք յարձանագիրս, և հարցէք ցերեւելիս քաղա-քին, եթէ գիտեն ինչ՝ պատմեսցեն ։ Երբեմն դնին մոմ շուրջանակի կանթեղաց և բառնին, եւ այս չէ ինչ նորա-սահման և խափանիչ օրինաց բաժանորդութեան և առիթ վիճման ։ Փոխանորդն Հայոց, ոչ եղեւ վէճ, և եթէ աւելի իր ինչ լեալ իցէ՝ առանց խռովութեան եւ հաճութեամբ երկուց կողմանց եղեալ է ։

Միւֆթի Էֆէնտի, վկայեմ առ այս թէ ոչ եղեւ վէճ և նորասահման ինչ յԱստուածածին, որպէս ասացին Հայք և Յոյնք ։ Ալի Միւհսին Էֆէնտի հաստատեաց զբանս նորին ։

Հաֆըզ Բաշիտ Էֆէնտին ընթերցաւ հրամանագիր Փո-խարքային և Հէօճճէթն բաժանորդութեան, և մուծաւ յար-